ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակում 114/17 ծածկագրով «Ներքին և արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատուների, լուսավորության պարագաների և աքսեսուարների ձեռքբերման» մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2017

**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները**

**<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը</u>՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

**<u>Մոնիթորինգի օբյեկտը</u>՝** «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

**<u>Մոնիթորինգի առարկան</u>՝** Ընկերության կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

**<u>Մոնիթորինգի նպատակը</u>՝** Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

**<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը</u>՝** 2017 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը:

**<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը</u>՝** Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

**«Ներքին և արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատուների, լուսավորության պարագաների և աքսեսուարների ձեռքբերման» բաց մրցույթ**

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն հիմք ընդունելով Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը կազմակերպել և անցկացրել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ կարիքների համար ներքին և արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատուների, լուսավորության պարագաների և աքսեսուարների ձեռքբերման բաց երկփուլ մրցույթ 14 լոտով:

Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2017 թվականի ապրիլի 3-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2017 թվականի ապրիլի 12-ը:

Հանձնաժողովի աշխատակազմը՝ գնումների առանձին գործարքների մոնիթորինգի շրջանակներում ուսումնասիրելու նպատակով ընտրել է «Ներքին լուսավորության լուսադիոդային լուսատուներ» լոտը: Ընտրված լոտի համար հայտ ներկայացրած ընկերությունները հայտը պատրաստել են մրցույթի ամբողջ ծավալի, 14 լոտերի համար, որը և ներկայացվել է Հանձնաժողով[1]:

Ընտրված լոտի համար հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «ԲԻ էս էֆ» ՍՊԸ-ն և «Ար-Գրուպ» ՍՊԸ-ն, որոնց հայտերն համարվել են հրավերի պահանջներին համապատասխան և տրվել է հնարավորություն մասնակցելու էլեկտրոնային եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին:

Վերը նշված մասնակիցներն երկրորդ փուլի ընթացքում նույնպես ներկայացրել են մեկ գնային առաջարկ ամբողջ փաթեթի համար: Մինչդեռ Ընկերության անհրաժեշտ էր յուրաքանչյուր լոտի համար կազմակերպել առանձին գնային առաջարկի ընդունում, ինչը կնպաստեր մրցույթի առավել արդյունավետ կազմակերպմանը:

Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

1 Մրցույթի մեկ այլ լոտին մասնակցության հայտ էր ներկայացրել մասնակից, որի հայտը տեխնիկական առաջարկների գնահատման փուլում մերժվել էր, սակայն մրցութային փաթեթում բացակայում է Ընկերության մերժման հիմնավորումը:

| № | Ընկերության անվանումը | Առաջարկած գին<br>հազ դրամ<br>առանց ԱԱՀ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | «ԲԻ էս էֆ» ՍՊԸ | 61 717,9 |
| 2 | «Ար-Գրուպ» ՍՊԸ | 61 917,9 |

Հաղթող է ճանաչվել «ԲԻ էս էֆ» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 61 717,9 հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար «Ներքին և արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատուների, լուսավորության պարագաների և աքսեսուարների ձեռքբերման» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել որ.

1. Ընկերության 2017 թվականի հրապարակված գնումների պլանում հայտարարված «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի տարածքում լուսավորության համակարգի կապիտալ վերանորոգում» բաց մրցույթի փոխարեն հայտարարվել և իրականացվել է տվյալ աշխատանքները կատարելու համար նախատեսված ապրանքների ձեռքբերման մրցույթ: Վերընշվածը չի համապատասխանում Հանձնաժողովի Որոշում 2-ի 13-րդ կետի պահանջներին, համաձայն որի՝ փոփոխությունների դեպքում գնումների պլանը անհրաժեշտ է վերահրապարակել: Հարկ է նշել, որ տվյալ փաստը սահմանափակում է հնարավոր մասնակիցների մրցույթին մասնակցելու իրավունքը և խոչընդոտում մրցակցությանը:
2. Մասնակիցների առաջարկված գնային առաջարկը գնահատվել է մրցույթի ամբողջ ծավալի համար, այնինչ մրցույթը բաժանված էր լոտերի և անհրաժեշտ էր ամեն ապրանքատեսակի համար իրականացնել առանձին գնային առաջարկների ընդունում, ինչը հնարավորություն կտար յուրաքանչյուր լոտի համար առանձին գնահատել ներկայացված հայտերի մրցակցային առավելությունները:
3. Մրցութային փաթեթում բացակայում է մրցույթի մեկ լոտի համար հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժելու հիմանավորումը:

4. Ընկերությունը իրականացրել է լուսադիոդային լուսատուների, լուսավորության պարագաների և աքսեսուարների շուկայի ուսումնասիրություն և հանձնաժողով է ներկայացրել որոշ ապրանքների գներ: Հարկ է նշել, որ Ընկերության մրցութային փաթեթում նշված տեխնիկական բնութագիրը և շուկայի ուսումնասիրության մեջ առկա ապրանքատեսակների տեխնիկական բնութագիրն միմյանց չեն համապատասխանում: Հաշվի առնելով այն փաստը, որ կախված ապրանքատեսակի տեխնիկական տվյալներից գները զգալիորեն տարբեր են, իսկ Ընկերությունը նշել է մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական տվյալները, ապա շուկայի ուսումնասիրության համար անհրաժեշտ էր ունենալ մրցութային փաթեթում նշված տեխնիկական բնութագրին համարժեք ապրանքի գներ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

**Ընկերության անվանում** «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

**Գնման անվանումը** «Ներքին և արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատուների, լուսավորության պարագաների և աքսեսուարների ձեռքբերման»

**Գնման ծածկագիրը** 114/17

**Գնման ձևը** Բաց մրցույթ

## ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում** | ☑ | ☐ | ☐ | |

## ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 2 | **Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը** | ☑ | ☐ | ☐ | Համաձայն Ընկերության գնումների կարգի՝ Որոտանի ՀԷԿՀ-ի կայանների շահագործման և սպասարկման հետ ուղղակիորեն կապված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերը հաստատում և ստորագրում է Ընկերության արտադրության ղեկավարը: |
| 3 | **Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը** | ☑ | ☐ | ☐ | |

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| | **ճիշտ է կատարվել** | | | | |
| 4 | **Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)** | ☐ | ☐ | ☑ | Ընկերությունը ներկայացրել է շուկայի ուսումնասիրության փաստաթղթեր, սակայն ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում մրցութային փաստաթղթերում ներկայացված տեխնիկական բնութագրին: |
| 5 | **Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար** | ☑ | ☐ | ☐ | Ընկերության պաշտոնական կայքում հրապարակված հայտարարությունները հասանելի չեն երրորդ անձանց: |
| 6 | **Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը** | ☐ | ☐ | ☑ | Մրցույթի մեկ լոտին մասնակցության հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժվել է, սակայն բացակայում է մերժման հիմնավորումը: |

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 7 | **Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար** | ☐ | ☐ | ☑ | Մրցույթի մեկ լոտին մասնակցության հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժվել է, սակայն բացակայում է մերժման հիմնավորումը: |
| 8 | **Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը** | ☐ | ☑ | ☐ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | **Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է** | ☑ | ☐ | ☐ | |
| 10 | **Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը** | ☑ | ☐ | ☐ | |
| 11 | **Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը** | ☑ | ☐ | ☐ | |
| 12 | **Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը** | ☑ | ☐ | ☐ | |
| 13 | **Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի** | ☐ | ☑ | ☐ | |

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 14 | **Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ** | ☐ | ☐ | ☑ | Մրցույթի մեկ լոտին մասնակցության հայտ ներկայացրած մասնակցի հայտը մերժվել է, սակայն բացակայում է մերժման հիմնավորումը: |
| 15 | **Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին** | ☐ | ☐ | ☑ | Հաղթող մասնակից է ընտրվել ամենացածր գին առաջարկողը: Հարկ է նշել, որ հայտերի գնահատման վերջին փուլում մասնակիցների հայտերը գնահատվել են մեկ գնային առաջարկով բոլոր լոտերի համար: |

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 16 | **Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը** | ☐ | ☐ | ☑ | Ընկերության ներկայացրած շուկայի ուսումնասիրության տվյալներում չկա կոնկրետ պահանջվող ապրանքատեսակի մասին ինֆորմացիա: |
| 17 | **Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)** | ☑ | ☐ | ☐ | |

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

| | Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|---|
| 19 | **Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ** | ☑ | ☐ | ☐ | |
| 20 | **Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով** | ☑ | ☐ | ☐ | |
| 21 | **Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին** | ☐ | ☐ | ☑ | Ընկերության ներկայացրած շուկայի ուսումնասիրության տվյալներում տվյալ լոտի տեխնիկական պայմաններին համապատասխան ապրանքատեսակի տվյալներ չկան: |